ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան երրորդ գործողությունների ծրագրում ներառելու նպատակով ներկայացված առաջարկությունների վերաբերյալ

Ծրագրում ներառված առաջարկություններ			
№	Առաջարկություն	Նկարագրություն	Առաջարկություն ներկայացնող
1.	Հանրապետական գործադիր մարմին-ների և տարածքային կառավարման մարմինների պաշտոնատար անձանց արտասահման գործուղումնե-րի թափանցիկության և հաշվետվողա-կանության ապահովում:	Տե՛ս ԲԿԳ-Հայաստան գործողությունների երրորդ ծրագիր	ՀՀ կառավարության աշխատակազմ
2.	«Ինտերակտիվ բյուջե» գործիքի կատարելագործում:	Տե՛ս ԲԿԳ-Հայաստան գործողությունների երրորդ ծրագիր	ՀՀ քաղաքացի Գրիշա Հովսեփյան
3.	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրերի էլեկտրոնային	Տե՛ս ԲԿԳ-Հայաստան գործողությունների երրորդ ծրագիր	ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով

	համակարգի համապատասխանեցում «Բաց տեղեկատվության» սկզբունքին:		
4.	Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների միասնական իրավական տեղեկատվական համակարգի ստեղծում:	Տե՛ս ԲԿԳ-Հայաստան գործողությունների երրորդ ծրագիր	ՀՀ կառավարության աշխատակազմ
5.	Պետական մարմինների կողմից տրամադրվող լիցենզիաների և ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց պետական միասնական էլեկտրոնային գրանցամատյանի ստեղծում:	Տե՛ս ԲԿԳ-Հայաստան գործողությունների երրորդ ծրագիր	ՀՀ ֆինանսների նախարարություն
6.	Սոցիալական ծառայությունների տրամադրման մատչելիություն ու իրազեկվածության մակարդակի բարձրացում:	Տե՛ս ԲԿԳ-Հայաստան գործողությունների երրորդ ծրագիր	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
7.	ՀՀ զինկոմիսարիատներում «Մեկ պատուհանի» պիլոտային ծրագրի ներդրում:	Տե՛ս ԲԿԳ-Հայաստան գործողությունների երրորդ ծրագիր	ՀՀ պաշտպանության նախարարություն
8.	ՀՀ պետական բյուջեից դրամաշնորհների հատկացման թափանցիկության և հաշվետվողականության ապահովում	Տե՛ս ԲԿԳ-Հայաստան գործողությունների երրորդ ծրագիր	ՀՀ կառավարության աշխատակազմ

Առաջարկություններ, որոնք չեն համապատասխանում ԲԿԳ 4 հիմնական սկզբունքներին և/կամ հավակնոտ ու հստակ չեն			
№	**Առաջարկություն**	**Նկարագրություն**	**Առաջարկություն ներկայացնող**
1.	Միասնական ինովացիոն գործարար հարթակ	Հայաստանում ինովացիոն միջավայրի ձևավորում, ինովացիոն գործունեության խթանում, գործարար էլեկտրոնային միջավայրի, ինովացիոն ենթակառուցվածքի ստեղծում և զարգացում, մասնավորապես, միասնական ինովացիոն գործարար էլեկտրոնային հարթակի ստեղծում, հարթակի գործիքակազմի մշակում, հարթակի գործունեության ապահովում:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
2.	[1] «Տարածաշրջանային ռիսկերի էլեկտրոնային ատլաս» երկրատեղեկատվական պորտալ	Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման արդիական խնդիրների լուծման համար տարածքում առկա աղետների ու վթարների ռիսկերի վերաբերյալ հասարակության իրա-	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

[1] Քննարկումների արդյունքում նախարարության կողմից հստակ չեն նշվել իրականացման ժամկետները:

		զեկվածությունը և ընդգրկվածությունը դրանց նվազեցման գործընթացում: Տեխնոլոգիաների հասանելիություն և դրանցից օգտվելու կարողության զարգացում, ինչպես նաև նորարարությունների իրականացման համար նոր տեխնոլոգիաների կիրառում:	
3.	Պետական ծրագրերի նկատմամբ հանրային վերահսկողության իրականացում	Հասարակական կարծիքի ուսումնասիրման բաղադրիչի ներդրմամբ ապահովել հանրային վերահսկողություն կառաարության կողմից իրականացվող ծրագրերի արդյունավետության և թափանցիկության բարձրացում:	Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ
4.	Երևանի քաղաքապետարանի ԹԵԺ գծի հեռախոսազանգերի որակի և վերահսկման համակարգի բերալավում	Հիմնական նպատակներն են՝ մատուցվող ծառայության ժամանակակից չափանիշներին համապատասխանեցումը, հավաքագրվող տեղեկատվության արխիվացման ապահովության բարձրացումը, նոր ֆունկցիոնալ հատկություններով համալրումը:	Երևանի քաղաքապետարան
5.	Երևան քաղաքի պարտադիր բարեկարգման գործընթացի տեղեկատվական և վերահսկողական համակարգի բարելավում	Համակարգի՝ նոր գործիքներով համալրումն ու ծրագրային հենքի բարելավումը կարագացնեն ծրագրի աշխատանքը, կնպաստեն վերահսկող մարմինների և նրա ստորաբաժանումների միջև իրականացվող աշխատանքների որակի բարձրացմանը, հաշվետվությունների միջոցով առավել մանրամասն տեղեկատվության տրամադրմանը, էլ ավելի կկրճատեն	Երևանի քաղաքապետարան

		ժամանակի ծախսը և կնվազեցնեն շրջանառվող թղթի քանակի կորուստը:	
6.	Երևանի համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառավարման համակարգի բարելավում	Համակարգի՝ նոր գործիքներով համալրումն ու ծրագրային հենքի բարելավումը կարագացնեն ծրագրի աշխատանքը, կնպաստեն հաշվետվությունների միջոցով առավել մանրամասն տեղեկատվության տրամադրմանը, կնվազեցնեն շրջանառվող թղթի քանակի կորուստը:	Երևանի քաղաքապետարան
7.	Երևան համայնքում գնումների գործընթացի կազմակերպման, վերահսկման և կառավարման համակարգի զարգացում	Համակարգի՝ նոր գործիքներով համալրումն ու ծրագրային հենքի բարելավումը կնպաստեն քաղաքապետարանենթակառուցվածքներ աշխատանքի որակի բարելավմանը, վերահսկող մարմինների և նրա ստորաբաժանումների միջև իրականացվող աշխատանքների որակի բարձրացմանը, հաշվետվությունների միջոցով առավել մանրամասն տեղեկատվության տրամադրմանը, էլ ավելի կկրճատեն ժամանակի ծախսը և կնվազեցնեն շրջանառվող թղթի քանակի կորուստը:	Երևանի քաղաքապետարան
8.	Երևան համայնքի մանկապարտեզների էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացում	Համակարգի զարգացումը և համալրումը ժամանակակից հնարավորություններով կնպաստի համայնք-քաղաքացի աշխատանքի որակի և վստահության բարելավմանը, էլեկտրոնային ծառայությունների մատուցման հարմարավետացմանը, վերահսկող մարմինների և նրա ստորաբաժանումների միջև իրականացվող	Երևանի քաղաքապետարան

		աշխատանքների որակի բարձրացմանը, մանկապարտեզ ընդունվել ցանկացող երեխաների քանակի մասին իրական տվյալների դուրսբերմանը, կօգնի զերծ մնալ կրկնագրված, կամ թերի, կամ ոչ իրական տվյալներից և կաջակցի ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականության բարելավմանը՝ ապահովելով նախադպրոցական կրթական համակարգի թափանցիկ աշխատանք:	
9.	Դատական ակտերի հարկադիր կատարման (ԴԱՀԿ) վերահսկողության էլեկտրոնային համակարգի բարելավում	Համակարգի զարգացումը կնպաստի էլեկտրոնային ծառայությունների մատուցման որակի բարձրացմանը, պետական և մասնավոր կառույցների միջև թափանցիկ փոխհամագործակցմանը, վերահսկող մարմինների և նրա ստորաբաժանումների միջև իրականացվող աշխատանքների որակի բարելավմանը, հաշվետվությունների միջոցով առավել մանրամասն տեղեկությունների վերլուծությանը, կօպտիմալացնի ժամանակի ծախսը և շրջանառվող թղթի քանակը:	Երևանի քաղաքապետարան
10.	Երևան համայնքի գովազդային միջոցների հաշվառման և վերահիսկման տեղեկատվական համակարգի զարգացում	Էլեկտրոնային համակարգի զարգացման հիմնական նպատակն է քաղաքացուն առավել հարմարավետ, որակյալ, թափանցիկ և ժամանակակից ծառայությունների մատուցումը:	Երևանի քաղաքապետարան
11.	iYerevan.am հարթակի բարելավում	Անհրաժեշտ է բարելավել համակարգի ֆունկցիոնալ մասը, բարելավել քաղաքապետարանի և քաղաքացիների	Երևանի քաղաքապետարան

		միջև հաստատված կապի արագության և հասանելիության որակը՝ նպաստելով ՏԻՄ-ի կողմից իրականացվող աշխատանքների թափանցիկության ապահովման զարգացմանը:	
12.	Շինթույլտվությունների ժամկետների վերա-հսկման համակարգի զարգացում	Տվյալ համակագի շնորհիվ վարչությունների միջև փոխհամագործակցությունը կլինի առավել կարգավորված և հստակ ժամկետներում՝ ապահովագրելով քաղաքա-ցիներին թյուրիմացություններից:	Երևանի քաղաքապետարան
13.	Երևան համայնքի ին-տերակտիվ բյուջեյի բա-րելավում	Մատուցվող ծառայության որակի բարձրացումը և ծրագրային հենքի բարելավումը կարագացնեն ծրագրի աշխատանքը, կնպաստեն հաշվետվութ-յունների միջոցով առավել մանրամասն տեղեկատվության տրամադրմանը, ինչն իր հերթին նպաստում է բյուջեյի պլանավորման ու տարեկան ֆինանսական ծախսերի թափանցիկությանը, նաև հաշվետվողա-կանության ապահովմանը:	Երևանի քաղաքապետարան
14.	Երևանի քաղաքա-պետարանի էլեկտրոնա-յին «ՄԵԿ պատուհան» համակարգի բարելավում և զարգացում	Համակարգը՝ տեխնոլոգիաների և ժամանակակից քաղաքակիրթ պահանջների զարգացմանը զուգահեռ, անընդհատ ունի արդիականացման, նոր գործիքներով համալրման կարիք: Նախատեսված է համակարգի ծրագրային հենքի բարելավում, ծառայությունների որոկի բարձրացում և ընդլայնում, էլեկտրոնային դիմումների նոր ձևաթղթերով և ուղեցույցներով համալրում:	Երևանի քաղաքապետարան

15.	e-apostille	Ապոստիլի էլեկտրոնային համակարգի (e-apostille) ստեղծում և ծրագրի (software) մշակում՝ իրավասու մարմի վերահսկողության ներքո (իրավական, տեխնիկական և գործառութային կողմերի ապահովում):	ՀՀ արդարադատության նախարարություն
16.	[2]Տեղեկատվության ազատության ոլորտի արդիականացման հայեցակարգի մշակում	Մշակել «Տեղեկատվության ազատության ոլորտի արդիականացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, իրականացնել հանրային քննարկումներ, առաջարկությունների հիման վրա լրամշակված նախագիծը ներկայացնել կառավարության հաստատմանը:	ՀՀ արդարադատության նախարարություն
17.	[3]Պետական գույքի օտարման նպատակով էլեկտրոնային աճուրդի անցկացումը	Պետական գույքի էլեկտրոնային աճուրդների կազմակերպման ծրագրային և տեխնիկական ապահովման դեպքում հնարավոր կլինի աճուրդները կազմակերպել էլեկտրոնային եղանակով, որի արդյունքում աճուրդները կլինեն առավել թափանցիկ, հրապարակային, գնորդների համար կստեղծվի պետական գույքի օտարման	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

[2] Միայնհայեցակարգի ընդունումը ենթադրող առաջարկները հավակնոտչեն և չեն ապահովում առաջարկության հիմքում ընկած նպատակների իրականացում;

[3] Առաջարկում ներկայացված ծրագիրը ենթադրում է էական ֆինանսական ներդրումներ, միաժամանակ, ազդեցության շրջանակը նեղ է:

		նպատակով կազմակերպվող աճուրդների մասնակցության առավել դյուրին պայմաններ և հնարավորություն կընձեռվի հասարակության ավելի լայն զանգվածին մասնակցել աճուրդներին, ինչն էլ իր հերթին կնպաստի ՀՀ պետական բյուջեի պետական գույքի օտարումից մուտքերի ավելացմանը:	
18.	www.el-democrator.am կայք էջի ստեղծում	Ծրագրի նպատակն է բարձրացնել հասարակական իրազեկվածությունը ՏԻՄ-ի գործունեության և համայնքի համար կարևոր որոշումների մասին, խթանել այդ գործընթացում հասարակության մաս-նակցությունը, ապահովել բարձրացված խնդիրների և դրանց լուծման գործընթացի հրապարակայնությունը, ինչպես նաև ուղղել անհատական և կոլեկտիվ դիմումները, ապահովել քաղաքացիների և քաղաքական, տեղական ինքնակառավարման մարմին-ների, այլ կազմակերպությունների միջև փոխգործակցության հրապարակայնությունը և թափանցիկությունը, քաղաքացիների և կառավարման մարմինների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջև փոխգործակցության բարձր օպե-րատիվությունը և ինտերակտիվ կապը:	Հասմիկ Մխիթարյան ՀՀ քաղաքացի

19.	e-government ծառայությունների արդյունավետության բարձրացում տեղակատվության մեկ միասնական բազայի ձևավորման միջոցով	Բարձրացնել e-government ծառայությունների արդյունավետությունը՝ տեղեկատվության մշակման և հրապարակայնացման միասնական բազայի ձևավորման միջոցով (open database): ՀՀ կառավարության կայքում ըստ համապատասխան նախարարությունների ստեղծել առանձին բաժիններ, որտեղ տեղադրված կլինի համապատասխան տեղեկատվություն նախարարությունների գործունեության հաշվետվությունների և հանրությանը մատչելի փաստաթղթերի վերաբերյալ:	«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ
20.	Էլեկտրոնային կառավարության ներդնում և բարելավում	ՀՀ Կառավարության կայքէջը տեղեկություն է տրամադրում տարբեր իրադաձրությունների վերաբերյալ, նաև օնլայն հարթակով տրամադրվում է աջակցություն և տեղեկատվություն, սակայն պրակտիկայում մեծամասամբ կապը հաստատվում է թղթային հաղորդակցության կամ ուղղակի ներկայանալու միջոցով: Առցանց հարթակում ոչ թղթային տարբերակով հաղորդակցության հեշտացում և առցանց հարթակում	«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ

		ծառայությունների մատուցման պրակտիկայի բարելավում:	
21.	Երիտասարդական հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացմանն աջակցություն և մասնակցային գործընթացների խթանում առցանց դրամաշնորհային համակարգի (www.cragrer.am) միջոցով	Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում երիտասարդության մասնակցության մակարդակի, երիտասարդական քաղաքականության մշակման, իրականացման գործընթացների արդյունավետության բարձրացում, երիտասարդական հասարակական կազմակերպությունների գործունեության խթանում:	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
22.	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասնակցությամբ գործող և Հայաստանում տնտեսական գործունեություն իրականացնող ընկերությունների թափանցիկության և հաշվետվողականության ապահովում	Գործողության հիմնական նպատակն է բարձրացնել մարդկանց իրազեկվածությունը իրենց անձնական տվյալների մշակման օրինականության, անձնական տվյալների օգտագործման կանոնների և անձնական տվյալների պաշտպանության մեխանիզմների մասին, այդ թվում՝ տրամադրել գիտելիքներ նոր տեխնոլոգիաների օգտագործմամբ անձնական տվյալների մշակման դեպքում անձնական տվյալների պաշտպանության մասին:	ՀՀ արդարադատության նախարարություն
23.	Համագործակցություն	Կադրերի հաշվառման և կադրային կառա-	ՀՀ պաշտպանության նախարարություն

	հայկական SS ոլորտում գործող ընկերություններ հետ	վարման «խելացի» էլեկտրոնային համակարգի ստեղծում:	
24.	Համատիրությունների ինստիտուտի ստեղծում	Ստեղծել իրականում գործող համատիրությունների ինստիտուտ՝ ապահովելով դրանց վերահսկողությունը հանրության, տեղական ինքնակառավարման մարմինների և գործադիր մարմինների կողմից:	Կարեն Երզնկանյան ՀՀ քաղաքացի
25.	Համայնքներում նախադպրոցական հաստատությունների ֆինանսավորման և կազմակերպահիրավական կարգավիճակի բարելավում	Նախադպրոցական հաստատությունների հաշվառում, կարիքների գնահատում, իրավիճակային վերլուծություն, անհատական պլանների կազմում: Նախադպրոցական հաստատությունների ինքնաֆինանսավորման հնարավորությունների ստեղծում:	Փառանձեմ Խանգելդյան ՀՀ քաղաքացի
26.	Քաղաքացիների ներգրավածություն և իրազեկվածություն ՏԻՄ որոշումների կայացման գործում	Podcast կամ մինի-ռադիոյի բացում, որը ունենալու է 2 հիմնական մաս՝ ՏԻՄ-երի գործողություններ լուսաբանում և մշակութային անդրադարձ:	Լուսինե Կարապետյան ՀՀ քաղաքացի
27.	Establishment of eco-friendly entrepreneurship	For the Armenian reality “Katil” will serve as a trust building mechanism, as well as a new medium of emotional connection between the diaspora of Armenia and the country. Unlike already failed examples of the past, when	Hovhannes Kuloghlyan ՀՀ քաղաքացի

		diasporan Armenian simply faced corrupted environments, we aim to provide investments opportunities with zero risks and maximum possible transparency. Each user will have the option to request financial and programmatic statements (both video reporting and narrative), meanwhile following any information regarding the funded projects.	
28.	Пути вероятного решения проблем глобальных потеплений	"Необходимы изобретения новых технологий по следующим темам: 1. Выделения оксидов азота от самолетов сверхзвуковой авиации, летающих выше тропосферы. 2. Производства азотных удобрений, где будет увеличение поступления закиси азота. 3. Заменить хлорфторуглероды, на ..... в производстве аэрозолей 4. Противопожарный стройматериал. 5. Создание фильтров, с целью предотвращение выбросов мелких твердых частиц - крупные извержения вулканов, косвенно влияющие на истощение озона. 6. Внести изменения в производстве хладагентов для холодильных установок и кондиционеров. 7. Оборудование для предотвращения вулканов.	Մարինե Մովսեսյան ՀՀ քաղաքացի

29.	Լուծումներ էկոլոգիական շրջակա միջավայրի և գլոբալ տաքացման խնդիրներին Հայաստանում	"Գլոբալ տաքացման հնավորին լուծումների միջոցառումները. 1.Փոխարինումը հանածո վառելիքի էկոլոգիապես մաքուր (արեգակնային էներգիայի, քամու էներգիայի) 2. Էներգախնայողության եւ անթափոների տեխնոլոգիաների զարգացումը 3. Զտիչ (ֆիլտր), մշակած ըստ ժամանակակից տեխնոլոգիաների, կնվազեցնի արտանետումները շրջակա միջավայր 4. Ժամանակակից տեխնոլոգիաների մշակում նվազեցնելու մեթանի կորուստներ իր արդյունահանման ընթացքում 5. Ներդրումը նոր տեխնոլոգիաների ածխածնի երկօքսիդ կլանման նպատակով 6. Ծառի տնկիներ 7. Ֆիտո մելիորացիաի օգտագործումը գյուղատնտեսության ոլորտում, մասնավորապես բարելավումը հայկական հողին, ցանքս եւ տնկում բույսերի, ծառերի, թփերի"	Մարինե Մովսեսյան ՀՀ քաղաքացի
30.	Содействие развитию экономического рынка Армении	Поднятие качества армянской продукции и уровня предоставляемых сервисов, следствием чего будет поднятие рейтинга Армянской промышленности на рынках европейских стран.	Մարինե Մովսեսյան ՀՀ քաղաքացի

31.	Քաղաքացիական ծառայողների պարտադիր վերապատրաստումներ՝ տեղեկատվության ազատության և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում:	Տեղեկատվության ազատության ոլորտում, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում քաղաքացիական ծառայողների գիտելիքները բարելավելու, օրենսդրության կիրառման հմտությունները կատարելագործելու նպատակով՝ ընդգրկել քաղաքացիական ծառայողների 2016-2018թթ պարտադիր վերապատրաստումների ծրագրերում:	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ
32.	ՀՀ պաշտպանության ոլորտը կարգավորող կառավարության որոշումների ընդունում և առկա իրավական բազայի վերանայում:	ՀՀ պաշտպանության նախարարությանը ծառայություններ մատուցող և համագործակցող հասարակական կազմակերպությունների և մասնավոր ընկերությունների հետ քննարկումների ու առկա խնդիրների լուծման շուրջ առաջարկությունների ստացում:	ՀՀ պաշտպանության նախարարություն
33.	Աջակցություն պաշտպանության մասին ՀՀ նոր օրենքի նախագիծը ՀՀ ազգային ժողովում ներկայացնելու գործում:	Սահմանադրական փոփոխություններից հետո ՀՀ պաշտպանության ոլորտը կարգավորող օրինաստեղծ գործունեության մասին հասարակության իրազեկում:	ՀՀ պաշտպանության նախարարություն

34.	ՀՀ պաշտպանության ոլորտը կարգավորող կառավարության որոշումների ընդունում և առկա իրավական բազայի վերանայում:	Պաշտպանական բարեփոխումներին հասարակական ներգրավածությունը գըտնվում է հիմնականում մասնագիտացված հասարակական կազմակերպությունների գործունեության շրջանակներում, ինչը բավարար չէ՝ հաշվի առնելով ՀՀ շուրջ առկա անվտանգության բարդ միջավայրը: Հասարակության բոլոր շերտերի իրազեկումը և ակտիվ ներգրավածությունը այս կամ այն ոլորտի բարեփոխումներում բխում են ՀՀ պաշտպանության նախարարության գերատեսչական շահերից:	ՀՀ պաշտպանության նախարարություն
35.	Մշակութային ծառայությունների ոլորտում տեղեկատվության և ծառայությունների մատչելիության ապահովում:	Նպատակն է մշակութային արժեքների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, համակարգումը և հանրությանը միասնական ձևաչափով դրանց ներկայացումն ու հասանելության ապահովումը:	ՀՀ մշակույթի նախարարություն
36.	Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման համակարգի ստեղծում:	Կրթությունից (դպրոցից) դուրս մնացած երեխաների բացահայտում և ընդգրկում, կըրթության իրավունքի իրացում:	ՀՀ կրթության և գիտության նախարարություն

37.	Շրջակա միջավայրի օդի աղտոտվածության խնդիրների լուծում:	Շրջակա միջավայրի օդի աղտոտվածության խնդիրները Հայաստանում կարելի է լուծել հետեւյալ ձևերով՝ 1. մշակել ժամանակակից տեխնոլոգիա ազոտի օքսիդի արտանետումների ավտոմեքենաներ և այլ շարժիչները 2. մշակել ժամանակակից ազոտի պարարտանյութ արտադրության տեխնոլոգիա 3. մշակել առաջավոր տեխնոլոգիան վերացնելու քլորՖտորբնածուխ աէրոզոլից 4. մշակել ժամանակակից տեխնոլոգիաների ֆիլտրեր, որոնք կանխարգելեն արդյունաբերական արտանետումները:	Մարինե Մովսեսյան ՀՀ քաղաքացի
38.	Մեկ պատուհանի սկզբունք՝ հանքարդյունաբերության ոլորտում լիցենզիաների տրամադրման դյուրացում:	Նպատակն է աջակցել նախարարություններին «մեկ պատուհանի» Կայքէջի մշակման և մեկնարկի գործարկման հարցում՝ թույտվությունների հայտերի, վերանայման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության, համապատասխան փաստաթղթերի, այդ թվում ՇՄԱԳ-ի, սոցիալական և բնապահպանական ուղեցույցերի, հայտերի ձևաչափերի և այլ	ՀՀ բնապահպանության նախարարություն

		նմանատիպ տեղեկատվության տեղադրման համար:	
39.	Փոքր ու միջին բիզնեսով զբաղվող տնտեսա-վորողների խնդիրների լուսաբանում:	Անձամբ տնետեսվարողի կողմից կոնկրետ խնդրի վերաբերյալ լուծումների առա-ջարկում, կոռուպցիայի և անհավասար մրցակցության կոնկրետ խնդիրներ ներկայացում՝ հաղորդաշարի միջոցով:	Մարինե Խառատյան ՀՀ քաղաքացի
40.	Առցանց բարձրացված հարցերի լուծումների առաջարկում, կամ կպարզաբանում հեռուս-տահաղորդաշարի մի-ջոցով:	Ապահովել հանրության մասնակցության իրական ազդեցությունը կառավարմանը վերաբերող որուշումների ընդունման, իրականացման, արդյունքների գնահատման գործընթացներում:	Աշոտ Միրզոյան ՀՀ քաղաքացի
41.	Կապի միասնական հա-մակարգի ստեղծում էլեկտրոնային փոստի հասցեների միջոցով:	Գաղափարի հիմքում ընկած է մեկ ընդհանրական հարթակի ստեղծումը, որը միաժամանակ կարող է հայտարարություն տարածել բոլոր այն գերատեսչություններին և իրավասու անձանց էլեկտրոնային հասցեներին, ովքեր կարող են մասնակցել խնդրի լուծմանը:	Արեգ Կարապետյան ՀՀ քաղաքացի
42.	Աջակցություն սահմա-նամերձ բնակավայրերի	Աջակցություն սահմանամերձ բնակավայրերի գյուղացիներին:	Տիգրան Մաթևոսյան ՀՀ քաղաքացի

	գյուղացիներին:	Սկզբնականում կարելի է ընտրել 3 հողագործ՝ մեկ հեկտար խաղողի այգի, մեկ հեկտար պտղատու այգի և մեկ հեկտար պտուղ բանջարեղենի մշակությամբ , 1 անասնապահ մոտ 70-100 մանր եղջերավորի խնամքով զբաղվողներ և նրանց ֆինանսավորել: Նախնական ֆինանսավորումը տեխնիկայի, բուժանյութերի, լրացուցիչ օժանդակող աշխատուժի համար, յուրաքանչյուրին տարվա կտրվածքով անհրաժեշտ կլինի մեկից մեկուկես միլիոն դրամ:	
43.	Հանրային օրինա-վորության ամրապնդում	ՀՀ սահմանադրությանը Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի «Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 16-ի N 352-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 460-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու կատարելու մասին» N 117-Ն որոշմամբ	«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ

		սահմանված դրույթների համապատասխանության հարցի քննարկման առաջարկի ներկայացում ՀՀ Սահմանադրական դատարանին:	
44.	Երիտասարդական խորհուրդների ստեղծում	Հիմնական նպատակը կայանում է նրանում, որ այս խորհրդի անդամները ստանան համապատասխան գիտելիքներ, կազմեն և ներկայացնեն ծրագրեր, իրականացնեն այլ համայնքների երիտասարդական խորհուրդների հետ համագործակցություն և փորձի փոխանակում, ապահովեն նրանց ակտիվ մասնակցությունը Տիմ-րի հետ համագործակցության հարցում, և համատեղ աշխատանքների միջոցով ապահովեն համայնքի զարգացմանը :	Տաթև Ավագյան ՀՀ քաղաքացի
45.	e-Citizen.am պորտալի ընդլայնում	Առաջարկվում է պորտալի հիմքի վրա ստեղծել և ավելացնել քաղաքացիներին պետության կողմից մատուցվող ծառայությունների ընդլայնված ցանկ:	«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ
46.	«Բաժանորդների ջրաչափում», «Բողոքների և վարձավճարների հետ կապված հարցումներ», «Ջրամատակարարման ընդհատումներ»պահանջների վերահսկման մեխանիզմները:	Առաջարկի նպատակն է մշակել «Բաժանորդների ջրաչափում», «Բողոքների և վարձավճարների հետ կապված հարցումներ», «Ջրամատակարարման ընդհատումներ» պահանջների վերահսկման մեխանիզմները, ինչպես նաև ներքին կատարողական ցուցանիշների (ՆԿՑ) գնահատման չափանիշներ:	ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտե

Օրենքների նախագծերի ընդունման պահանջ ենթադրող առաջարկություններ (նշված պահանջի ապահովումը դուրս է լիազորությունների շրջանակից)			
№	**Առաջարկություն**	**Նկարագրություն**	**Առաջարկություն ներկայացնող**
1.	Հանրային օրինավորության ամրապնդում	Առաջարկվում է՝ 1) գնահատել Հայաստանի Հանրապետության բնակչության կենսամակարդակը. 2) կենսամակարդակի գնահատված ցուցանիշն օգտագործել պետական սոցիալական քաղաքականություն մշակելիս և իրականացնելիս. 3) հիմնավորել սահմանվող նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաև նպաստների և սոցիալական այլ վճարների չափերը. 4) որոշել չհարկվող եկամտի չափը»: ՀՀ կառավարությունը պետք է համապատասխան ուղղումներ մտցնի ՀՀ հարկային նոր օրենսգրքի նախագծում եւ ներկայացնի ՀՀ ԱԺ:	«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ
2.	ՀՀ պաշտոնատար անձանց կողմից ՀՀ օրենքների ու ենթա-օրենսդրական ակտերի կիրարկման պրակ-տիկայի, օրենսդրական հակասությունների ու-սումնասիրություն՝ ման-կավարժներին մասնակի կենսաթոշակի նշանա-	ՀՀ պաշտոնատար անձանց կողմից ՀՀ սահմանադրությամբ ու օրենքներով ՀՀ քաղաքացիներին վերապահված իրավունքների ամբողջական կատարում եւ այդ գործում իրենց վերապահված լիազորությունների կատարման ժամանակ ՀՀ պաշտոնատար անձանց կողմից օրինախախտումների դեպքում պատասխանատվության օրենսդրական նորմերի կարգավորում, հստակեցում ու ուժեղացում:	«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ

	կելու, պետական պատ-վերով բժշկական օգ-նություն եւ դեղեր ստանալու ուղղությամբ		
3.	Հանրային օրինավորության ամրապնդում	ՀՀ պաշտոնատար անձանց կողմից ՀՀ սահմանադրությամբ ու օրենքներով իրենց վերապահված լիազորությունների կատարման նկատմամբ պատասխանատվության բարձրացում և դրանց խախտելու դեպքում անմիջական գույքային պատասխանատվություն կրելու օրենսդրական նորմերի կարգավորում ու սահմանում:	«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ
4.	ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի թափանցիկության և արժանահավատության ապահովում	ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի թափանցիկության և արժանահավատության ապահովում	«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ
5.	ՀՀ սահմանադրությամբ սահմանված օրենքի գերակայության նորմի իրացում:	Հանրային լայն անհանգստության առարկա է այսպես կոչված «կարմիր գծերի» տուրքերի մասին հարցը: Այդ տուրքի գանձումը դիտարկվո(է որպես հակաօրինական է, գանձվում է իբր տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների իրականացման շրջանակում, սակայն չի պահպանվում «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի ոչ մի դրույթ, քաղաքացիներին չի մատուցվում ոչ մի ծառայություն, փոխարենը անհարկի գանձվում են անհիմն տուրքեր, տույժեր, տուգանքներ: Պետք է ՀՀ կառավարությունը շահագրգիռ կողմերի հետ ուսումնասիրի հարցը, իրականացնի դրա հանրային անհրաժեշտ քննարկումներ և գտնի դրա լուծումները:	«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ

6.	ՀՀ պետական բյուջեից կրթությանը հատկաց-վող գումարների բաշխման թափանցի-կության և այդ գումարների ծախսման նպատակայնության և հաշվետվողականության ապահովում:	Կրթությանը հատկացվող պետական բյուջեի միջոցների բաշխման մեխանիզմի վերանայում: Առաջարկվո(մ է նախապատվություն տալ նախևառաջ հանրապետության բոլոր հանրակրթական դպրոցներում հասանելի և որակյալ պարտադիր 12-ամյա կրթության ապահովման ծրագրերին, ինչը անմիջականորեն բխում է ԿԶՆ 4-րդ նպատակի ներքո Հայաստանի ստանձնած պարտավորությունից: Վերանայել հանրակրթական դպրոցների ֆինանսավորման բանաձևն այնպես, որպեսզի այն արտացոլի որակյալ կրթական ծառայությունների ապահովման համար անհրաժեշտ բոլոր դպրոցների բոլոր կարիքները:	«Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան» ՀԿ
7.	Համայնքի բնակիչների անմիջական մասնակ-ցության ապահովումը՝ համայնքին վերաբերվող հարցերի որոշման վրա	Կայքի և հավելվածի ստեղծում, որը կապահովի բնակիչների մասնակցությունը այս կամ այն հարցերի քվեարկությամբ: Այսինքն որոշումն ընդունելու համար բավարար չի համարվի միայն ավագանո(որոշումը, անհրաժեշտ կլինի նաև համայնքի բնակիչների օնլայն քվեարկությունը (որոշակի համամասնությամբ):	Էդգար Մուղնեցյան ՀՀ քաղաքացի
8.	ՏԻՄ–երի կողմից պաշտոնական կայքեր ունենալը և վարելը:	Հանձնառո(թյան շնորհիվ ակնկալվում է որ՝ Կբարձրանա ՀՀ համայնքների համացանցային գործող պաշտոնական կայքերի հրապարակայնության, թափանցիկության, համայնքի անդամների առջև հաշվետվողականության ապահովման աստիճանը: Օրենսդրորեն կսահմանվի «համայնքային պաշտոնական համացանցային կայք» հասկացությունը: Համայնքային պաշտոնական համացանցային կայքերը կհամապատասխանեցվեն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. ապրիլի 8-ի №280-Ա հրամանով սահմանված նվազագույն պահանջներին: Մինչ համայնքների խոշորացման գործընթացի ավարտը՝ 5000 և ավել բնակիչ ունեցող համայնքների ՏԻՄ-երի համար կսահմանվի համայնքների պաշտոնական համացանցային կայքերի վարման կարգի պարտադիր	«Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ

		հաստատման որոշակի ժամկետ, ինչի շնորհիվ կհիմնվեն համայնքային պաշտոնական նոր կայքեր: Կընդլայնվեն համայնքային համացանցային պաշտոնական կայքերի հնարավորությունները ՏԻՄ-երի կողմից քաղաքացիներին և իրավաբանական անձանց առցանց տրամադրվող ծառայությունների մատուցման իրականացման ոլորտում: Կմեծանան համայնքային համացանցային պաշտոնական կայքերի տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորությունները՝ ավելի հարմարավետ և դյուրին դարձնելով կայքերի տարբեր բաժինների ընդլայնված որոնումը:	

ԲԿԳ առաջին և երկրորդ գործողությունների ծրագրերի հանձնառությունները կրկնող առաջարկություններ (կշարունակվեն իրականացվել առանց ԲԿԳ երրորդ գործողությունների ծրագրում ընդգրկվելու)			
№	**Առաջարկություն**	**Նկարագրություն**	**Առաջարկություն ներկայացնող**
1.	Հանքարդյունաբերության թափանցիկության խթանում	Գործողության հիմնական նպատակն է միանալ ԱՃԹՆ-ին և ստանալ համապատասխանող երկրի (compliant country) կարգավիճակ, այդպիսով նպաստելու հանքարդյունաբերության ոլորտի պատասխանատու կառավարմանը, թափանցիկությանն ու հաշվետվողականությանը, ինչպես նաև հիմնական շահագրգիռ կողմերի միջև համագործակցությանը:	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ
2.	Համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության ապահովում	Կապահովել Հայաստանի թվով 5 (10000-ից 20000 բնակչություն ունեցող) համայնքների համացանցային կայքերի ստեղծումը, թարմացումը, համայնքային իշխանության կողմից ընդունված բոլոր իրավական ակտերի հրապարակում, ավագանու նիստերի, հանրային քննարկումների և լսումների վերաբերյալ ծանուցումը, ավագանու նիստերի առցանց հեռարձակումը և համայնքի	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

		բնակիչների կողմից ՏԻՄ-երին հարցեր ուղղելուհնարավորությունը:	
3.	Համայնքապետարանների գործունեության արդյունավետության, ծառայությունների մատուցման մատչելիության մակարդակի բարձրացում	Թվով 5 համայնքներում քաղաքացիների սպասարկման գրասենյակների բացում և գործարկում:	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:
4.	ՏԻՄ-երի գիտելիքների և հմտությունների բարելավում տեղեկատվության ազատության և հակակոռուպցիոն ոլորտներում	Վերապատրաստումը կբարելավի օրենքով ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների իրականացման արդյունավետությունը, հնարավորություն կընձեռի ավելի կատարելագործել կոռուպցիայի դեմ պայքարի հմտությունները և տեղեկատվության ազատության գործիքների տիրապետման միջոցները, ինչպես նաև կզինի բավարար գիտելիքներով և փորձով բաց ու թափանցիկ գործելու համար:	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
5.	Իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ քննարկումներ	Իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ քննարկումները անհրաժեշտ է անցկացնել սկսած իրավական ակտի նախագծի գաղափարից /green papers/, ինչը հնարավորություն կտա շահագրգիռ մարմիններին գաղափարի քննարկման փուլում իրենց ձայնը հասանելի դարձնել և ներկայացնել գաղափարի վերաբերյալ իրենց մոտեցումները:	«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ
6.	Իրավական ակտերի նախագծերի	Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումների համաձայն իրավական ակտի նախագծի հրապարակումից հետո 15-օրյա ժամկետում շահագրգիռ մարմինները հնարավորություն ունեն ներկայացնելու իրենց առաջարկությունները: Նախագիծը մշակած մարմինը սակայն չունի որևէ պարտավորություն քաղաքացիական հասարակության կողմից ներկայացված	Իրավական ակտերի նախագծերի

		առաջարկներին ի պատասխան նշել, թե որ առաջարկներն են ընդունվել, որոնք են մերժվել՝ ինչ հիմնավորմամբ: Իրավական ակտի նախագիծը մշակած մարմնի առջև ներկայացված բոլոր առաջարկություններին պատասխան տալը կբարձրացնի հանրային մասնակցությունների արդյունավետությունն ու նախագիծը մշակած մարմինների հաշվետվողականությունը:	

Առաջարկություններ, որոնց քննարկումները և/կամ իրականացումը նախատեսված է ԲԿԳ-ից դուրս այլ հարթակներում			
№	**Առաջարկություն**	**Նկարագրություն**	**Առաջարկություն ներկայացնող**
1.	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասնակցությամբ գործող և Հայաստանում տնտեսական գործունեություն իրականացնող ընկերությունների թափանցիկության և հաշվետվողականության ապահովում	Գործողության հիմնական նպատակն է բացահայտել հանրային միջոցներն օգտագործող ընկերությունների շահառու սեփականատերերին, այդ թվում՝ դրանցում ապօրինի ներգրավված հանրային ծառայողներին՝ նվազեցնելու կոռուպցիոն ռիսկերը և կանխարգելելու փողերի լվացումը: Այդ նպատակով հարկավոր է առաջնահերթության կարգով՝ իրականացնել իրավական և ինստիտուցիոնալ դաշտի վերլուծություն և մշակել օրենսդրական առաջարկություններ՝ ապահովելու Հայաստանում գործունեություն իրականացնող բոլոր ընկերությունների թափանցիկությունը, ընդհուպ մինչև դրանց շահառու սեփականատեր հանդիսացող ֆիզիկական անձանց անունների հրապարակում, կառավարության որոշումներով նախատեսել հանրային գնումներին և հանրային միջոցների օգտագործման այլ պայմանագրերին մասնակցելու դեպքում ընկերությունների կողմից իրենց շահառու սեփականատերերի ամբողջական ցանկի ներկայացում, ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձի և նրան փոխկապակցված	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ

		անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերում որպես հրապարակման ենթակա տվյալ սահմանել արտերկրում գրանցված գույքը և ընկերությունները՝ նշելով նաև երկիրը ու դրանցից ստացված եկամուտները:	
2.	<< պետական մարմինների կողմից տրամադրվող ելքային էլեկտրոնային փաստաթղթերի համապատասխանեցում բաց տվյալների չափորոշիչներին	Առ այսօր պետական մարմինների կողմից տրամադրվող հանրությանը հասանելի ելքային էլեկտրոնային փաստաթղթերը չեն համապատասխանում բաց տվյալների չափորոշիչներին(open data standarts): Տարբեր գերատեսչությունների կողմից տրամադրվող փաստաթղթերը չունեն միատեսակ ձևաչափ(format), անվանումներ, առանձին դեպքերում ներբեռնվում են նախատեսված ժամկետից ավելի ուշ և հանրության համար դժվար օգտագործելի են:	Մի խումբ փորձագետներ
3.	[4]Բաց տվյալների (Open Data) ստանդարտի ներմուծում	Ներկայումս պետական կայքերում տեղադրվող տեղեկատվության հետ կապված գոյություն ունեն մի շարք խնդիրներ, որոնք խոչընդոտում են տեղեկատվության իրական բացությանը. 1. Ստեղծել եւ ուժի մեջ մտցնել պետական կայքերի մակարդակով տվյալների հրապարակման ստանդարտներ, որոնք կհամապատասխանեն միջազգային ընդունված բաց տվյալների (Open Data) ստանդարտներին 2. Բաց տվյալների ստանդարտի ներմուծման պահից պետական կայքերում հրապարակել նոր տվյալները միայն ստանդարտին համապատասխան ֆորմատներով	Մի խումբ փորձագետներ

[4] Առաջարկը ներկայացվել է նախագծի մշակման վերջին օրերին, ինչը հնարավորություն չի տվել իրականացնել հնարավոր ֆինանսական ծախսերի և անհրաժեշտ կարողությունների գնահատում:

		3. Անցկացնել արդեն եղած պետական տվյալների շտեմարանների աուդիտ, պարզել դրանց հնարավոր վերափոխումը դեպի բաց տվյալների ֆորմատով ելքային տվյլաների արտադրումը:	
4.	Պետական կառավարման ոլորտի բարեփոխումներին ուղղված ծրագրերի արդյունքների գնահատում և ամփոփում	**Պետական կառավարման ոլորտի բարեփոխումների ծրագրերի արդյունքում պետության կողմից որևէ հաշվետվություն և արդյունքների ո՛չ երկարաժամկետ ո՛չ էլ կարճաժամկետ գնահատում չի իրականացվում: Հաջորդ տարվա գործողությունների ծրագիրը մշակելիս նախորդի արդյունավետության գնահատում և արդյունքների ամփոփում չի իրականացվում, ինչպես նաև նույն գործողությանն առաջնայնություն տրամադրելու և այն հաջորդ տարվա ծրագրում վերարտադրելու համար որևէ բացատրություն չի գործում: Կառավարության առջև դրված տարբեր խնդիրներ և նպատակներ նույնությամբ կրկնվել են 2013, 2014 և 2015 թվականների գործողությունների ծրագրերում: Կառավարության առջև դրված խնդիրները որոշ դեպքերում կրկնվում են՝ ներառվելով այլ ավելի մեծ խնդիրների շրջանակներում: Արդյունքների ամփոփում իրականացվել է միայն report.gov.am կայքում, սակայն այդ կայքը 2011 թվականից հետո չի թարմացվել և վերաբերում է միայն 2007-2011 թվականներին: Նպատակը պետական կառավարման ոլորտի բարեփոխումներին ուղղված ծրագրերի արդյունքների գնահատում իրականացնելն է, ինչպես նաև հաշվետվություն ներկայացնելը:**	**«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ**
5.	Datalex Դատական տեղեկատվական համակարգի կատարելագործում	Դիմումների առցանց մուտքագրման դեպքում, որը կհամարվի պաշտոնական նամակագրություն, դիմողների դատարանի հասանելիությունը կհեշտացվի և կնպաստի ռեսուրսների խնայողության:	«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ

6.	Հասարակություն - պետական մարմիններ ինովացիոն և խորհրդատվական պորտալի ստեղծում	Ծրագրի հիմնական նպատակը հասարակություն-պետական մարմիններ ինովացիոն և խորհրդատվական պորտալի ստեղծումն է, որի միջոցով կընտրվեն հասարակության համար արդիական խնդիրները և համապատասխան լուծումները մատչելի կերպով կներկայացվեն հասարակությանը:	Լիանա Մանուսաջյան ՀՀ քաղաքացի
7.	Տնտեսվարող սուբյեկտների ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշների սահմանում	Հանձնառության հիմնական նպատակն է ստուգում իրականացնող մարմինների վերահսկման ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտի համար կանխավ (ստուգումը պլանավորելուց առաջ) հասանելի ու թափանցիկ դարձնել իր անհատական ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշները, ռիսկի գնահատման ընթացակարգը և դրանց հիման վրա տրված ռիսկայնության գնահատականը:	«Արազա» բարեգործական ՀԿ
8.	Պետական քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների՝ բաց, թափանցիկ, մասնակցային և հաշվետու գործընթացի ապահովում	Պետական կառավարման հանրապետական ու տարածքային մարմինների պաշտոնական կայքերում և հատկապես ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում պետական բյուջեներով նախատեսված ֆինանսական ու ոչ ֆինանսական ցուցանիշների ու բյուջետային բոլոր ծրագրերի արդյունքային ցուցանիշների մասին եռամսյակային հաշվետվությունների տեղադրում:	«Հայաստանի Հանրապետության Ռազմավարական ծրագրերի Քաղաքացիական համագործակցության ցանց» ՀԿ
9.	Բյուջեի ճիշտ և ռացիոնալ տնօրինում, դրամական նվիրատվությունների չափորոշիչների ստեղծում	Ստեղծել հանրային ֆինանսավորում ստացող ծրագրերի լուսաբանման տեղեկատվական-վերլուծական առցանց հարթակ, որը նպաստելու է հաշվետվողականությանը և թափանցիկությանը բոլոր շահագրգիռ կողմերի համար՝ ՏԻՄ և պետական սեկտոր, ՀԿ-ներ, քաղ. նախաձեռնություններ և հարկատու բնակիչներ:	Էմմա Բաղդասարյան ՀՀ քաղաքացի

10.	Մաքսային ոլորտի թափանցիկություն	Հսկիչ գնի պահպանման դեպքում՝ տրանսպորտային միջոցների մաքսազերծման տվյալների հրապարակում,համապատասխան ֆիլտրման հնարավորությամբ (մակնիշ, մոդել, արտադրման տարեթիվ):	Արամ Մխիթարյան ՀՀ քաղաքացի
11.	Որոշումների կայացման գործընթացում քաղհասարակության ներգրավվածության բարձրացում և թափանցիկության ապահովում	Հանրային օնլայն խորհրդարան (ՀՕԽ) ինովացիոն հարթակի միջոցով ցանկացած հետաքրքրված քաղաքացի կարող է. -իրազեկվել ՀՀ-ում հանրային մեծ կարևորություն ունեցող օրենքների, որոշումների մշակման կամ բարեփոխման մասին, -մասնակցել իրավական ակտերի վերաբերյալ քննարկումներին, ներկայացնել դիտարկումներ կամ առաջարկություններ, -ազատորեն արտահայտել և հանրայնացնել սեփական կարծիքը, հանդես գալ «օրենսդրական նախաձեռնությամբ»: Իրավաբան փորձագետի միջոցով ՀՕԽ կայքում հանրամատչելի (user-friendly) կերպով կներկայացվեն շրջանառության մեջ գտնվող իրավական ակտերը: Առցանց քննարկումների ժամանակ հնչած կարծիքները, առաջարկությունները կհավաքագրվեն, փորձագետի կողմից կստանան իրավական ձևակերպում և կներկայացվեն շահագրգիռ պետական կառույցներին: ՀՕԽ-ը կկազմակերպի օֆլայն աշխատանքային հանդիպումներ, վերապատրաստման դասընթացներ և քննարկումներ՝ հարթակի մասին իրազեկելու, շահագրգիռ անձանց և ՔՀԿ-ներին մոտիվացնելու և ներգրավելու համար:	«Հանուն կրթության և գիտության» ՀԿ

	Հայաստանի Հանրապետության գնումների համակարգի կայքի արդիականացում	Հանձնառության հիմնական նպատ է դյուրացնել և ընդլայնել կայքից օգտվելու հնարավորությունները:	«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ
	ՀՀ բոլոր նախարարությունների կայքում իրականացված պետական գնումների վերաբերյալ տեղեկատվության տեղադրում	Ներկայումս գրեթե բոլոր նախարարությունների կայքերը տեղեկություն են պարունակում միայն պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների և դրանց ծախսման վերաբերյալ: Կայքերում տեղեկատվություն չկա տվյալ նախարարության կողմից գնումների	«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ

		գործընթացի արդյունքում կնքված պայմանագրերի, դրանց իրականացման և արդյունքների վերաբերյալ: Հանձնառության հիմնական նպատակը պետական մարմինների կողմից իրականացված գնումների գործընթացն առավել թափանցիկ և հաշվետու դարձնելն է:	
	ՀՀ պետական բյուջեի սոցիալակ պաշտպանության տողով ՀԿ-նեբ հատկացվող ֆինանսական միջոցների մրցույթային մոդելի և սոցիալական ծառայությունների առանձին տեսակները ՀԿ-ներին պատվիրակելու ինստիտուտի ներդնում	Պետական բյուջեից հասարակական կազմակերպություններին տրվող ֆինանսական միջոցների թափանցիկ, մրցունակ և կայուն համակարգի ներդրում: Սոցիալական ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպությունների լիցենզավորման հստակ չափանիշների սահմանում և կիրառում: Չափանիշների և դրանց գործընթացի կազմակերպման մեխանիզմների մշակման մեջ քաղ.հասարակության ներառում: ՀՀ ԱՍՀՆ-ի կողմից Սոցիալական ծառայությունների հասարակակական կազմակերպություններին պատվի-	«Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ

		րակելու գործուն համակարգի ներդրում:	